Եղիշե Չարենց

Կարմիր նժույգները թռչում են...

Կարմիր նժույգները թռչում են սրընթաց,
Կարմիր նժույգները՝ բաշերը փրփուր:
Վառվում, բոցկլտում են պայտերը նրանց,
Պայտերը սփռում են բոցկլտուք ու հուր:

Վառվել է երկիրը կարմիր կրակով.
Կարմիր նժույգները վառե՛լ են երկիրը,
Թռչում են հողմի՛ պես անընդհատ շարքով,
Ամեն տեղ երաշտ է, տագնա՛պ է, գրգի՛ռ է:

Դոփում են պայտերը, կայծկլտում են վա՛ռ,
Կայծերը նետի՛ պես ճեղքում ե՛ն գալիքը,
Հողմի մեջ փլչում են շենքերը մարմար.
Ամեն տեղ հրդեհ է, ու հուրը բարիք է:

Թռչո՛ւմ են, թռչո՛ւմ են անվերջ, սրընթաց
Կարմիր նժույգները, բաշերը փրփուր,
Վառվում, հրդեհվում են հետքերը նրանց
Կարմիր նժույգները հրդեհ են ու հուր...